ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏԻ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ.

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ ԱՌԸՆԹԵՐ

ՎԵՐԱՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ



ՅԵՐԵՎԱՆ 1936 ЭРИВАНЬ

30 JAN 2018

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ—ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ

1. Վերստուգիչ հանձնաժողովների կազմակերպումն ու անձնական կազմը.

1. Համամիութենական Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1930 թ. 20-ին հունվարի վորոշման հիման վրա—գյուղխորհուրդների ընտրությունների հետ միաժամանակ ընտրվում են և վերստուգիչ հանձնաժողովները՝ ընտրողների ընդհանուր ժողովի կողմից, նույն կարգով և լիազորության նույն ժամկետով:

Վերստուգիչ հանձնաժողովներն ընտրվում են 3—5 անդամի և 2 թեկնածուի կազմով:

2. Վերստուգիչ հանձնաժողովներն իրենց կազմից ընտրում են նախագահ և քարտուղար, վորոնց վրա և դրվում է աշխատանքների կազմակերպման պարտականությունները: Վերստուգիչ հանձնաժողովների կազմի մեջ պետք է ընտրվեն հեղինակություն ունեցող անձնավորությունները, վորոնք ստուգված են գործնական աշխատանքների մեջ և վորոնք վայելում են գյուղի աշխատավոր և կոլխոզային մասսաների համակրանքը:

3. Վերստուգիչ հանձնաժողովի անդամները կարող են հեռացվել աշխատանքից ընտրողների ընդհանուր ժողովների վորոշումների հիման վրա, յեթե կհայտնաբերվի, վոր նրանք անփույթ և անտարբեր վերաբերմունք են ցույց տալիս դեպի իրենց պարտականությունները, անգործունյա են, կամ քրեական պատասխանատվության յենթարկելու դեպքում:

4. Վերստուգիչ հանձնաժողովի կազմի մեջ կարող են ընտրվել բոլոր այն քաղաքացիները, վորոնք ընտրական իրավունքից զրկված չեն, ի բաց առյալ հետևյալ անձանց՝

ա) վորոնք ընտրված են գյուղխորհրդի կազմի մեջ, վորպես անդամներ, կամ թեկնածուներ.

բ) վորոնք գտնվում են տվյալ գյուղխորհրդում ծառայության մեջ:

գ) վորոնք գտնվում են վորևե բարեկամական կապերի մեջ (ծնողներ, ամուսիններ, յեղբայրներ, քույրեր, զավակներ)՝ գյուղխորհրդի նախագահի, քարտուղարի, հաշվետարի հետ, կամ այլ աշխատակիցների հետ, վորոնք ծառայում են տվյալ խորհրդում:

Վերստուգիչ հանձնաժողովի կողմից ընտրված նախագահը հաստատվում է շրջանային գործադիր կոմիտեի կողմից:

2. Վերստուգիչ հանձնաժողովների փոխհարաբերությունները սեկցիաների յեվ հասարակական կազմակերպությունների հետ.

1 Վերստուգիչ հանձնաժողովները գյուղխորհուրդների սեկցիաների հետ աշխատում են ամենասերտ կերպով, իրենց աշխատանքների պլանները համաձայնեցնում են սեկցիաների աշխատանքների պլանների հետ և սեկցիաներին անմիջականորեն մատակից դարձնում իրենց աշխատանքներին։

2. Վերստուգիչ հանձնաժողովները իրենց աշխատանքներին անպայման մասնակից են դարձնում գյուղի ակտիվին, առաջավոր կոլխոզնիկներին, ֆինանսական ֆրոնտի հարվածայիններին, պրոֆկազմակերպություններին, կոմսոմոլին, նաև անհրաժեշտության դեպքում մասնագետներին (հաշվապահներ, հաշվետարներ, ուսուցիչներ, գյուղատնտեսներ, տեխնիկներ և ճարտարապետներ)։

3. Վերստուգիչ հանձնաժողովների իրավունքները ու պարտականությունները.

1. Վերստուգիչ հանձնաժողովն իրավունք ունի՝

ա) անմիջականորեն կապվել պետական հիմնարկների, ձեռնարկների և հասարակական կազմակերպությունների հետ և նրանցից ստանալ նյութեր ու տեղեկանքներ, որոնք անհրաժեշտ են կատարվելիք ստուգումների համար.

բ) պահանջել—ներկայացնել իրեն տվյալ խորհրդի գործունեության վերաբերյալ բոլոր գրքերը, փաստաթղթերը, տեղեկանքները և գործերը, իսկ անհրաժեշտության դեպքում, գործերից առանձնացնել կասկածելի փաստաթղթերը, թողնելով ստուգվող հիմնարկին այդ փաստաթղթերի պատճենները։

գ) մասնակցել խորհրդակցական ձայնի իրավունքով գյուխորհրդի բոլոր նիստերին

դ) քննել ստուգվող մարմնի՝ հիմնարկության կամ ձեռնարկության գործունեությանը վերաբերվող բոլոր գործերը, մատյանները, հաշիվները և այլ փաստաթղթերը.

յե) պահանջել ներկայացնելու ստուգման համար, ստուգվող մարմնի դրամական-նյութական միջոցները և մասնավորապես այդ մարմիններում կատարել դրամարկղային ստուգումներ.

զ) կատարել տեղում ստուգվող աշխատանքների, ինչպես նաև նրանց վերաբերող փաստաթղթերի քննություն և դրամական գումարների ու նյութերի հաշվառում.

է) գործուղել վերստուգիչ հանձնաժողովի անդամներին առանձին հիմնարկություններ կամ ձեռնարկություններ ստուգելու, հետազոտելու, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկանքներ ստանալու համար.

11-280489

ը) ստուգվող մարմինների, հիմնարկությունների և ձեռնարկությունների պաշտոնական անձերից պահանջել բացատրություններ

թ) ներկա լինել այն հիմնարկությունների ու ձեռնարկությունների ժողովներին ու խորհրդակցություններին, որոնց վերստուգիչ հանձնաժողովն իրավունք ունի ստուգելու, հետազոտելու.

ժ) ոգտվել գյուղխորհուրդների տրամադրության տակ յեղած փոխադրական միջոցներից՝ ստուգումներ կատարելու համար շրջելիս.

ի) պահանջել՝ հրավիրել ընդհանուր ժողով (հասարակական ժողով) այն դեպքերում, յերբ հայտնաբերում են որոնքների խախտումներ, կամ խորհրդային իշխանության դասակարգային գծի խեղաթյուրումներ, միաժամանակ տեղյակ են պահում այս մասին շրջանային գործադիր կոմիտեյին, իսկ հափշտակումներ, կեղծիքներ, յուրացումներ կամ այլ տեսակի հանցագործություններ հայտնաբերելու դեպքում, անմիջապես գործը հանձնում են քննչական մարմիններին՝ մեղավորներին պատասխանատվության յենթարկելու համար։

2. Իշխանության բոլոր մարմինները, հիմնարկությունները ու կազմակերպությունները վերստուգիչ հանձնաժողովին պետք է ցույց տան ամենալայն աջակցություն։

3. Գյուղխորհուրդներն իրավունք չունեն միջամտելու իրենց առընթեր կազմակերպված վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքներին և նրանց վրա կարգադրություններ անելու, հանձնարարություններ տալու։

Վերստուգիչ հանձնաժողովները պարտավոր են՝

1. Ներկա լինելու շրջգործկոմի նախագահության նիստերին՝ գյուղբյուջեն քննարկելու ընթացքում։

2. Ստուգել վոչ պակաս ամսեկան մեկ անգամ, իսկ առանձին դեպքերում հանկարծակի, ըստ իր հայեցողության, կամ շրջգործկոմի առաջարկությամբ գյուղխորհրդի կանխիկ դրամական միջոցները և դրամարկղային գիրքը ու հայտնաբերված բոլոր տեսակի խախտումների մասին տեղյակ պահել շրջանային գործադիր կոմիտեյին։

3. Վոչ պակաս յեռամսյակում մեկ անգամ կատարել խորացած և լրիվ ստուգում գյուղխորհրդի ամբողջ ֆինանսական գործունեության—ըստ փաստաթղթերի, արդյունքների մասին զեկուցելով գյուղխորհրդի պլենումին։

4. Վոչ պակաս տարեկան մեկ անգամ կատարել ստուգում ըստ փաստաթղթերի այն բոլոր հիմնարկներում, որոնք ֆինան-

սավորվում են գյուղբյուջեյով և գյուղխորհրդին յենթակա ձեռնարկներում։

5. Գյուղխորհրդի նախագահի, քարտուղարի կամ հաշվետարի փոփոխման դեպքերում կատարել գյուղբյուջեյի լրիվ ստուգում և արդյունքների մասին զեկուցել գյուղխորհրդի պլենումին։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գյուղխորհուրդների նախագահի փոփոխման դեպքում ստուգումը կատարվում է շրջֆինբաժնի ներկայացուցչի մասնակցությամբ, վորը հաստատում է զորձերի լնդունման և հանձնման արձանագրությունը։

6. Գյուղխորհուրդներին յեղրակացություններ են տալիս տեղական բյուջեյի կատարման մասին, մասնակցում են գյուղի հիմնարկությունների և ձեռնարկությունների նախահաշիվների ու պլանների քննությանը։

7. Ստուգել ազգաբնակչության միջոցների մոբիլիզացիայի պլանի կատարողականը, ունենալ հսկողություն պետական փոխառությունների ճիշտ տարածման վրա և այդ փոխառություններից ու պետական հարկերից վորքան ճիշտ են կատարվում մասհանումները շրջանային և գյուղական բյուջեների ոգտին։ Ունենալ հսկողություն պետական աշխատավորական խնայդրամարկղների ավանդային գործառնությունների զարգացման վրա։

8. Ստուգել, վորքան ճիշտ են անցկացվում բոլոր տեսակի ֆինանսական, տնտեսա-քաղաքական կամպանիաները (գյուղտարկի, ինքնահարկի, Պետտրի, կուլտ-տուրքի, տեղական հարկերի ու տուրքերի)։

9. Ստուգել աշխատավոր մենատնտեսների, կոլխոզների ու կոլխոզնիկների համար սահմանված հարկային արտոնությունները ժամանակին կիրառելու բնագավառում գյուղխորհրդի գործունեությունը։

10. Ստուգել գյուղխորհուրդներին յենթակա բոլոր հիմնարկների ֆինանսա-տնտեսական գործունեությունը։

11. Ունենալ հսկողություն, թե վորքան նպատակահարմար և ճիշտ են ոգտագործվում այն գույքերը, վորոնք պատկանում են գյուղխորհրդին և ինչպես և կատարվում շինարարական և վերանորոգման աշխատանքների վորակի բարձրացումը, նաև այդ աշխատանքների գների իջեցումը։

12. Ստուգել, թե ինչպես են ծախսվում գյուղխորդի կողմից ինքնահարկման կարգով մուծվող միջոցները և բոլոր այլ տեսակի արտաբյուջետային միջոցները, ըստ նպատակների, թե վոչ։

13. Հետևել, վորպեսզի գյուղխորհուրդը ժամանակին և լրիվ չափով մոցնի պետական կամ խնայդրամարկղ մուծման յենթակա բոլոր գումարները։

14. Ունենալ խիստ հսկողություն անդորրագրային սիստեմայի կիրառման վրա, վորպեսզի յուրաքանչյուր դեպքում դրամ մուծողին տրվեն սահմանված ձևի անդորրագրեր։

15. Ստուգել գյուղխորհուրդների և նրանց յենթակա հիմնարկների, ձեռնարկությունների զրաժական և նյութական միջոցների ու այլ գույքի պահպանումը, ծախսումը, ինչպես նաև նրանց կողմից խնայողական ռեժիմի կիրառումը։

16. Վերադաս գործադիր կոմիտեների ու ֆինմարմինների կողմից վերստուգիչ հանձնաժողովներին կարող են հանձնարարվել նաև կատարելու ստուգումներ գյուղխորհրդին վոչ յենթակա հիմնարկ-ձեռնարկներում։

17. Վերստուգիչ հանձնաժողովներն իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են խորհրդային շինարարության դասակարգային ընդհանուր գծով գործող օրենքներով և վերադաս գործադիր կոմիտեների վորոշումներով։

Պայքարում են խորհրդային իշխանության դասակարգային գծի խեղաթյուրումների դեմ։

4. Վերստուգիչ հանձնաժողովը պատասխանատու յե.

1. Գյուղխորհրդում տեղի ունեցող ամեն տեսակի վատնումների, հափշտակումների և զեղծարարությունների համար, յեթե այդպիսիները յերևան են հանվում վոչ վերստուգիչ հանձնաժողովի, այլ ուրիշների կողմից։

2. Հաշվառման և հաշվետվության վատ դրվածքի համար, յեթե այդ մասին ժամանակին վերստուգիչ հանձնաժողովը տեղյակ չե պահել շրջանային գործադիր կոմիտեին (շրջֆինբաժնին)։

3. Վերստուգիչ հանձնաժողովների անդամներն իրենց աշխատանքների համար պատասխանատու յեն վորպես պաշտոնատար անձինք։

5. Վերստուգիչ հանձնաժողովների գործունեության ղեկավարությունն ու նրանց աշխատանքների կարգը.

1. Վերստուգիչ հանձնաժողովների գործունեության ղեկավարությունն իրականացնում են վերադաս գործադիր կոմիտեները։

Հանձնաժողովների սիստեմատիկ հրահանգումը, համապատասխան տեխնիկական ողնություն ցույց տալը և հսկողությունը դրվում են ֆինմարմինների վրա (շրջֆինբաժնի հատուկ հրահանգչի և բյուջետային տեսուչների վրա)։

Գյուղխորհրդում վերջին ստուգումը պետք է կատարվի վոչ

ուշ, քան մեկ ամիս առաջ, գյուղխորհուրդների վերընտրության։

2. Ստուգումը կամ հետազոտումը կատարվում է ստուգվող հիմնարկության, ձեռնարկության կամ աշխատանքը գլխավորող անձի, կամ նրա տեղակալի ներկայությամբ։

Ստուգվող մարմնի բացակայությամբ ստուգումը կատարել թույլատրվում է անհետաձգելի դեպքերում, յերբ հնարավոր չե շանագրգռված հիմնարկության ներկայացուցչին ստուգմանը մասնակից դարձնել։ Այդ դեպքում ստուգումը կատարելիս անպայման ներկա յե լինում տեղի գյուղխորհրդի անդամը կամ լիազորը։

3. Ստուգումը կատարելիս վերստուգիչ հանձնաժողովներն իրավունք չունեն միջամտելու ստուգվող հիմնարկության կամ ձեռնարկության ընթացիկ աշխատանքներին և ամիջականորեն նրանց կարգադրություններ անելու։

4. Ստուգումն ավարտելուց հետո, վերստուգիչ հանձնաժողովը կազմում է գրավոր արձանագրություն, վորտեղ նշվում են արդյունքները, նաև այն ձեռնարկումները, վորպիսիք վերստուգիչ հանձնաժողովն անհրաժեշտ կամ նպատակահարմար և համարում հայտնաբերված թերությունները վերացնելու համար։

Արձանագրությունը ստորագրում են վերստուգիչ հանձնաժողովի անդամները, ստուգվող հիմնարկության կամ ձեռնարկության ղեկավարը, հաշվետվության համար պատասխանատու անձը, նաև ստուգմանը մասնակցող այլ անձինք։

5. Յեթե վերստուգիչ հանձնաժողովի անդամներից և ստուգմանը մասնակցողներից վորևե մեկը արձանագրության հետ համաձայն չե, ապա նրան իրավունք և վերապահվում 3 որվա ընթացքում արձանագրության մեջ մտցնել իր առանձին կարծիքը։

6. Վերստուգիչ հանձնաժողովի կազմած արձանագրությունը պահվում է հանձնաժողովի գործերում, այդ արձանագրության մեկ պատճեն թողնվում է ստուգվող հիմնարկությունում կամ ձեռնարկությունում, իսկ յերկրորդ պատճեն ուղարկվում է շրջգործկոմին (շրջֆինբաժնի գծով), կամ վերադաս որգանին ըստ պատկանելույն։

7. Գյուղական վերստուգիչ հանձնաժողովի արձանագրության առթիվ իր ընդունած վորոշումը գյուղխորհուրդն արձանագրությունը ստանալու պահից 10 որից վոչ ուշ, հայտնում է վերստուգիչ հանձնաժողովին, վորը վերոհիշյալ վորոշման հետ համաձայն չլինելու դեպքում, այդ մասին զեկուցում է ընտրողների ընդհանուր ժողովին (հասարակական ժողով)։

Ընտրողների ընդհանուր ժողովի վորոշումների հետ համաձայն չլինելու դեպքում, վերստուգիչ հանձնաժողովն իրավունք ունի հարցը փոխադրել շրջանային գործադիր կոմիտեյի նախագահությանը։

8. Գյուղ. վերստուգիչ հանձնաժողովներն իրենց աշխատանքի համար հաշվետու յեն և իրենց գործունեության համար պատասխանատու յեն ընտրողների ընդհանուր ժողովի առաջ (հասարակական ժողովի), բացի դրանից, իրենց աշխատանքների մասին զեկուցում են գյուղացիական լայն կոնֆերանսներում և համապատասխան գյուղխորհրդի զեկուցման ժամանակ, նրանց գործունեության մասին հանդես են գալիս վորպես զեկուցակից։

6. Վերստուգիչ հանձնաժողովի անդամների վարձատրությունը.

1. Գյուղ. վերստուգիչ հանձնաժողովի աշխատանքները գլխավորապես կատարվում են աշխատանքի ժամերից դուրս։

Վերստուգիչ հանձնաժողովի աշխատանքներն աշխատանքի ժամերից դուրս կատարելու անհնարավորության դեպքում, հիմնարկությունները, ձեռնարկությունները և տնտեսությունները, վորտեղ ծառայում են վերստուգիչ հանձնաժողովի անդամները, պարտավոր են գյուղվերստուգիչ հանձնաժողովի նախագահի պահանջմամբ, նրանց աշխատանքից ազատել ստուգումները կատարելու ժամանակամիջոցում։

2. Վերստուգիչ հանձնաժողովների անդամները, վորոնք ծառայում են վարձով, իրենց պարտականություններն աշխատանքի ժամերին կատարելու դեպքում, ի հաշիվ վարձողի պահպանում են իրենց միջին աշխատավարձը տարվա մեջ 10 որվա սահմաններում։

Տարվա մեջ 10 որից ավելի որերի համար նշված անդամների վարձատրությունը կատարվում է գյուղխորհրդի բյուջեյի միջոցների հաշվին, ըստ վորում վճարվող որերի առավել թիվը սահմանվում է շրջանային գործադիր կոմիտեների կողմից։

3. Գյուղական վերստուգիչ հանձնաժողովի վոչ բանվոր ու ծառայող անդամները վարձատրվում են այն դեպքում, յերբ ստուգման աշխատանքները տևել են 5 ժամից ավելի, իսկ գյուղատնտեսական աշխատանքների ընթացքում՝ անկախ ստուգման տևողությունից, նայած՝ տարիֆային գոտուն՝ հետևյալ կայուն դրույքներով։

Որեկան 1 ռ. առաջին գոտիով, 90 կոպ. 2-րդ գոտիով, 80 կոպ. 3-րդ գոտիով, 70 կոպ. 4-րդ գոտիով և 60 կոպ. 5-րդ գոտիով։

Իսկ վերստուգիչ հանձնաժողովի այն անդամները, վորոնք

բանվոր կամ ծառայող են, վերոհիշյալ դրույքները բարձրացվում են 100 տոկոսով։

4. Վերստուգիչ հանձնաժողովների այն անդամները, որոնք իրենց պարտականությունները կատարում են ոչ իրենց մշտական բնակավայրում, ստանում են գյուղխորհրդի հաշվին որապահիկ, սահմանված մինիմումի չափով (այսինքն 4ռ. որեկան)։ Բացի սրանից նրանց տրվում է բնակարանի վարձ որեկան 3 ռ., յեթե նրանց ձրիաբար բնակարան չի տրամադրվում։

7. Վերստուգիչ հանձնաժողովի անդամության թեկնածուների մասին.

1. Վերստուգիչ հանձնաժողովի անդամների իրավունքները, պարտականությունները և աշխատանքի վարձատրության կանոնները տարածվում են նաև այդ հանձնաժողովի անդամների թեկնածուների վրա այն դեպքում, յերբ նրանք փոխարինում են վերստուգիչ հանձնաժողովի անդամներին նրանց բացակայության ժամանակ, կամ յերբ նրանք հնարավորություն չեն ունենում կատարելու իրենց պարտականությունները, որպես վերստուգիչ հանձնաժողովի անդամներ։

Սոյուզորգուչատի տպարան. պատ. 104 Գլավլիտ № 2022

ՀՀ Ազգային գրադարան
NL0977558

1 5 АПР. 1936 291

11
28078

Издательство Н. К. Ф. СССР Армении

ПОЛОЖЕНИЕ
о сельских ревизионных комиссиях сель-советов